ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» Հոկտեմբերի 2018թ.-ի N 21-Ն

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2018թ. ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել Գեղարքունիք համայնքի 2018թ.-ի բյուջեի առաջին ինն ամիսների հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

Առդիր 2 թերթ:

Ավագանի՝

4 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով

X

Գեղարքունիք համայնքի ղեկավար՝ Կ. Ասատրյան

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» Հոկտեմբերի 2018թ.-ի N 22

«ԻՆՏԵՐՆԵՏ ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻՈՆՑԱՆՑԵՐ» ՍՊԸ-Ի ՀԵՏ ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1. 21) կետով Գեղարքունիք համայնքի ավագանին՝

որոշեց.

1. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ «Ինտերնետ կոնունիկացիոն ցանցեր» ՍՊԸ-ի հետ կնքել փոխհամաձայնության պայմանագիր՝ Գեղարքունիքի համայնքապետարանի շենքի տանիքի ինտերնետ հեռարձակման սարքավորումների դիմաց համայնքապետարանին անվճար ինտերնետ կապ տրամադրելու դիմաց:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանի՝

4 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով

X

Գեղարքունիք համայնքի ղեկավար՝ Կ. Ասատրյան

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 Հոկտեմբերի 2018թ. N 23-Ն

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ.-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Գեղարքունիք համայնքի կուլտուրայի տան շենքի 2-րդ հարկի մի հատվածը մանկապարտեզի ձևափոխման աշխատանքների, տեխ. հսկողության և Գեղարքունիք համայնքի խմելու ջրագծի մի հատվածի հիմնանորոգման աշխատանքների տեխ. հսկողության և նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծախսերի ֆինանսավորման համար, ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ կետի համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ե Տ

1. Գեղարքունիք համայնքի 2018թ,-ի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից՝ ֆոնդային բյուջեին կատարել հատկացում 1870.0 հազար դրամի չափով, այն ուղղել՝
   ա. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 1 խմբի 1 դասի և բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 5112 հոդվածին 1390,0 հազար դրամ, այդ թվում՝ աշխատանքների կատարմանը 1290,0 հազար դրամ և տեխ. հսկողությանը 100,0 հազար դրամ
   բ. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 06 բաժնի 3 խմբի 1 դասի և բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 5113 հոդվածին 460,0 հազար դրամ, այդ թվում՝ աշխատանքների կատարմանը 450,0 հազար դրամ և տեխ. հսկողությանը 10,0 հազար դրամ, 5133 հոդվածին 20,0 հազար դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանի՝

4 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով

X

Գեղարքունիքի գյուղապետ Կ. Ասատրյան

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 Հոկտեմբերի 2018թ. N 24-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԿ ՀՈՂԱԿՏՈՐ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ, ՄԵԿ ՀՈՂԱԿՏՈՐ ԽՈՏՀԱՐՔԸ ԵՎ ՄԵԿ ՀՈՂԱԿՏՈՐ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով << Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, << Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 18-րդ հոդվածի 1. 21) կետով , Գեղարքունիք համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության մեկ հողակտոր վարելահողը, մեկ հողակտոր խոտհարքը և մեկ հողակտոր այլ հողատեսքը մրցույթով օգտագործման տրամադրել վարձակալությամբ և սահմանել հետևյալ մեկնարկային գները.
   ա. Գյուղ. նշանակության վարելահող, կադաստրային ծածկագիրը՝ 05-025-0105-0009, մակերեսը՝ 0.63258 հա, մեկնարկային գինը՝ 9000 (ինն հազար) << դրամ,
   բ. Գյուղ. նշանակության խոտհարք, կադաստրային ծածկագիրը՝ 05-025-0105-0010, մակերեսը՝ 1.70661 հա, մեկնարկային գինը՝ 3000 (երեք հազար) << դրամ,
   գ. Գյուղ. նշանակության այլ հողատեսք, կադաստրային ծածկագիրը՝ 05-025-0113-0012, մակերեսը՝ 0.17467 հա, մեկնարկային գինը՝ 7000 (յոթ հազար) << դրամ,
   Հողամասերը տրվում են վարձակալության 25 տարի ժամկետով:

2. Համայնքի ղեկավարին՝ հանձնարարել համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով վարձակալության տրամադրող հանձնաժողովին՝ «Հայաստանի Հանրապետություն» թերթում տալ հայտարարություն՝ մրցույթի անցկացման և սահմանված պայմանների վերաբերյալ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Ավագանի՝
4 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով

X

Գեղարքունիքի գյուղապետ Կ. Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 Հոկտեմբերի 2018թ. N 25

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՊԱՐԳԵՎ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ.

Քննարկելով Գեղարքունիք համայնքի բնակիչ՝ Պարգև Ոսկանյանի դիմումը՝ Կարեն Դեմիրճյան փ. 64 հասցեում գտնվող արտադրական շինությանը կից տարածքում ավտոլվացման կետ կառուցելու համար 40մ^2 հողամաս տրամադրելու հարցը, ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1.21) կետով և ՀՀ կառավարության 12.04.2001թ.-ի N286 որոշման 46-րդ կետի 2-րդ ենթակետով համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. Գեղարքունիք համայնքի Կարեն Դեմիրճյան փ. 64 հասցեում գտնվող արտադրական շինությանը կից տարածքում Պարգև Ոսկանյանին կառուցապատման իրավունքով տրամադրել 18.5մ^2 հողամաս՝ տարեկան 2000 ՀՀ դրամ վարձավճարով:
2. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանի՝

4 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով

X

Գեղարքունիքի գյուղապետ Կ. Ասատրյան

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 Հոկտեմբերի 2018թ. N 26

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով Գեղարքունիքի համայնքապետարանում Գեղարքունիքի մարզպետարանի իրավական և մասնագիտական հանձնաժողովի կողմից իրականացված ստուգումների արդյունքները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1. 37) կետով համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ

1. Գեղարքունիքի մարզպետարանի իրավական և մասնագիտական հանձնաժողովի կողմից Գեղարքունիքի համայնքապետարանում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված թերությունները շտկելու համար Գեղարքունիքի համայնքապետարանի աշխատակազմին տրամադրել 1 ամիս ժամկետ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանի՝

4 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով

X

Գեղարքունիքի գյուղապետ Կ. Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 Հոկտեմբերի 2018թ. N 27-Ն

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1.1) կետով Գեղարքունիք համայնքի ավագանին

որոշեց.

Հաստատել՝ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Գեղարքունիք համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

Ավագանի՝

4 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով

X

Գեղարքունիքի գյուղապետ Կ. Ասատրյան

Կ.Տ